


ԵՐՐՈՐԻ. ՏԱՐԻ
ԹԻԻ 7.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՅՈՒԼԻՍ 31.
1868.

ԸՕԳԸՅԻՆ, ԲԸՆԸՍԻՐԸԸՆ ԵՒ ԳՐԸԳԻՏԸԸՆ

Լ Ո Ի Ծ Ո Ի Մ Ն

666 ԹՈՒՈՅՆ

Յ Ո Վ Հ Ա Ն Ն Ո Ւ Յ Ա Յ Տ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

* Այս է Կանառութիւն, որ ունի միտս՝
համարեցի զթիւ գաղմկին. թիւ եղևոյն
մնացայ և թիւս անուան նորոց է այս՝ 666 ու
Յոյս. ԺԳ. 13.

Յովհաննու Յայտնութեան 666
թուոյն պատճառաւ ժամանակ առ
ժամանակ յաւելած մատանջու-
թիւնները արդէն յայտնի են բանա-
գէտ ընթերցասիրաց շատերուն: Հաս
մեկնութիւններ տեղի ունեցած են
այս մասին, և գուցէ շատերն եւս տե-
ղի պիտի ունենան քանի որ մարդ-
կային միտքը անյարուրդ հետազոտու-
թեան ենթակայ է: Սենք պիտի հո-
ղորդենք այժմ մեր ընթերցողներուն

մեր դարու ոմանց Լըրուպացի գիտ-
նականաց տուած լուծումը: Սակայն
ամենէն առաջ արժան կը համարինք
համառօտիւ յիշատակել Քրիստոնէ-
ութեան երկրորդ դարէն սկսեալ մին-
չեւ մեր դարը եղած մեկնութիւննե-
րէն քանի մի նշանաւորները:

Սուբբն Իրէնէոս՝ կամ Լըրանոս, Լի-
ոն քաղաքի հռչակաւոր եպիսկոպոս,
երկրորդ դարուն վերջերը՝ Սեպտիմ'
Սեվերիոս կայսեր հարստանայ ժամա-
նակ, առաջին անգամ հետազոտու-
թեան ենթարկեց 666 թիւը և Լաթ-
նոս ու Տիգրան քառերորդ նշանակու-
մ

Թեան մէջ եղբարականեց իւր մեկնու-
թիւնը : Սակայն այս բայցատրու-թիւ-
նը առաւել իւր չափազանց Հոմերոս
կարդալու արգասիքն համարուեցաւ ,
քան թէ իրական մեկնութիւն :

Իննովկենտիս Գ. Պապը , 1215
Թուականին , Խաչակրաց պատերազմը
հրատարակելով՝ այնպէս մեկնեց , որ
պէս թէ 666 թիւը մահմետականու-
թեան կատարածը կը նշանակէ , որ
արդէն Խաչակրաց օրով պիտի վերջա-
նայ կամ լրումն առնու : Սակայն այս
մեկնութիւնը եւս՝ առաւել երեւա-
կայութեան ծնունդ էր և ժողովուրդ
յուզելու շարժառիթ , քան թէ ըս-
տոյգ գուշակութիւն :

Ի ռթեր , Պապութեան սկզբնա-
ւորութիւնը Վրիդոր Է. Պապէն հա-
շտելով և Յովհաննու Յայտնութեան
666 թիւը նոյն նկատմամբ քննելով՝
այնպէս մեկնեց , որ ժե դարուն՝ մէջ
պիտի վերջանայ Պապութիւնը : Սա-
կայն ժամանակը ստեց Ի ռթերի մեկ
նութիւնը . վասն զի , արդէն ՃԹ գա-
րուն մէջ եղբ և տակաւին Պապու-
թիւնը կը շարունակի :

Ի նգեւ Վերմանային , 666 թիւը
ալժեբրայական հաւասարութեամբ
հետազօտելով՝ այնպէս եղբարականեց ,
թէ 1836 Թուականի Յունիսի 18 ն
աշխարհիս կատարածն է : Ի այց այս
գրահաշուական գուշակութիւնը եւս
սուտ էլաւ :

Ի յո ժամանակագրական մեկնու-
թիւններէն զատ եղան նոյնպէս մեկ-
նութիւններ քանի մի պատմական
անձանց նկատմամբ , որոնք նշանաւոր
եղան իրենց բարբարոսութեամբ և
գազանաբարոյ ընթացքով : Ի յո տե-
սակ անձանց գլխաւորները (որոց յար-
մարեցուած են 666 թուան գազանի
բնաւորութիւնը) քաբա են . — 1 .
Վանդալաց լեոնտրիկ Թագաւորը ,

որ 455ին , 14 աւուր մէջ , ատպատակեց
Հռովմը և անհամար քանձեր կողոպ-
տեց . յետոյ աւերեց Պելլագանէսը , Լ-
պիրը , Իսլամոտիան և Խաթրիան , ա-
ռաւ Լիկոպոլիսը , գերեց . Լագոքսիա
Թագուհին և այլ աշխարհաւոր գոր-
ծեր ունեցաւ : Ի յուպէս որ պատմու-
թեան մէջ լեոնտրիկը նկարագրուած
է իբրեւ կատաղի յաղթանակող , որոյ
շնչառութիւնը ոչ այլ ինչ է , եթէ
ոչ սպանութիւն և արիւնահեղու-
թիւն : — 2 . Ի նեդգրիկոս Թ Պապը
որ 1033 Թուականին՝ իւր 12 տա-
րեկան հասակին մէջ , անորդ ճա-
նապարհաւ Պապութեան տթոռը
բարձրացաւ և իւր անձը ամենատե-
սակ ամթաղից գործոց տալով՝ մեր-
ժուեցաւ Լ թոռէն և երկու անգամ
վերստին հաստատուեցաւ , իբր թէ
յետ ժամանակոց սպաշխարելով իւր
արարքները : — 3 . Վիտիլէտիանոս կայս-
րը , որ սարսափելի հալածանքներով
Վրիտոնէնութեան դէմ զինեցաւ և
շտտերը նահատակեց խոշտանգելով :
Ի յո կարծիքը Վիտիլէտիանոսի վրայ ,
իբրեւ Յայտնութեան գազանին , ըն-
դունած է Բօսուէն իւր գրուածոց
մէջ . Վիլիէ — () Գոսթոս անուան տա-
ռերը փոփոխելով և Յայտնութեան
ակնարկած գաղանի 666 թիւը հանե-
լով : Սակայն այս օրինակ տառադար-
ձութեամբ ոմանք այնպիսի ջանձանց
անուաններ եւս սկսան մեկնել , որոնք
ընդհակառակն՝ յայտնի են պատմու-
թեան մէջ իրենց արօնաւոր գոր-
ծերով :

Իբ տեսները ուրեմն որ այս տե-
սակ մեկնութիւնները երբեք չեն կա-
րացեր մարդկային մտաց անհանգր-
տութիւնը անգորրացնել և մեր գա-
րու մէջ գիտնական հետազօտութիւ-
նը բողբոլվին ուրիշ ճանապարհաւ
մեկնած է 666 թիւը : Ի յո մեկնու-

Թիւնը, զոր պիտի հաղորդենք մեր ընթերցողաց, ոչ աստուածաբանաւ կան է, ոչ վարդապետական և ոչ ծը նունդ տուելութեան և կրից, այլ լոկ բանասիրական է և պատմական:

Լբրոպական բանապէտները 666 թիւը գտած են Հռովմէացոց մէկ հալածանէր և մարդսիրողը կոյտեր անուան տառերու մէջ: Ըյս 666 անուամբ գաղանկ է Լբար Լերօն: Ըյս եզրակացութիւնը հիմնած են Լբրոյ յակն տառերու արտասանութեան և թուական նշանակութեան վրայ. վասն զի « Լբրայականի մէջ կործ ձայնաւորները ինչպէս են առանց շեշտի », Ե և այլն, թիւ չեն նշանակեր, այլ միայն թաւ ձայնաւորները և բարդաձայնները: Ուստի Լբրայական տառերու նշանակութեամբ առնելով (1) Լ հաւասար է 100, « 60, ր 200, ն 50, ր 200, զ 6. ն 50, և հետեւապէս Լբար Լերօն բառը հաւասար է 666:

Սուրբ Լյանուս կը պատմէ որ իւր ժամանակի մի քանի ձեռագիր օրինակաց մէջ փոխանակ 666 ին տեսած է Յայանութեան մէջ 616 թիւ: Ըյս աւելի ապացոյց է Լբրոպական գիտ նականաց տառերու թուական եզրակացութեանը, վասն զի Յայանութեան օրինակազներու շատերուն արդէն յայտնի լինելով 666 թուայն ի մասաւր՝ ոչ թէ ըստ Յունականին Լերօն հնչած են, այլ ըստ Լատինականին Լերօն և հետեւապէս ն առաւ հետ 50 թիւ պակսելով 666 էն՝ գրած են 616:

Ըյս կարծիքը, որ Լեսար Լերօնն է Յովնանու Յայանութեան ակնար.

(1) Ծան. Ընթերցողք մեր հայկական տառերու թուական նշանակութիւնը չը պէտք խառնեն Երայականի հետ, վասն զի մեք թէ և հայերէն տառեր գործ գրինք, բայց այն տառերը երայականի մէջ ինչ թիւ որ կը պարունակեն, նոյն թիւը նշանակելովք և:

կան գաղանկ կամ նեւը՝ շատ հին է և բայց ի հարկէ ոչ թէ թուագիտական եզրակացութեամբ, այլ լոկ իւր գործոց պատմական տեղութեամբ: Բաց ի քանի մի Սիբիլայից գուշակութիւնները, որոնք Լեսար անուամբ ակնարկած են այն անձը, որ իւր մայրը պիտի սպաննէ և աշխարհս պիտի լծուածէր: Լեսար անուամբ, պատեհազմաւ և արիւնահեղութեամբ, շատ ակնաւոր անձինք եւս, ինչպիսի են Լակտանս, Սիւլլիս Սիվեր, Հերոնիմոս և (Գուտիոս Նոյն համագումն առնեցած են Լերօնի վրայ, ինչպէս կ'երեւի իրենց գրածներէն: Ով որ փոքր ի շատեւս տառաւորած է պատմութիւն և մանաւանդ Տոցիտի (Տոկիտոսի) երկաթիւն թիւնը, ամենեւին չը գործաւոր, որ մինչեւ հինգերորդ դարը Լերօնը իրեւ նեւն նկատուած է և Բայց և մենք ընթերցողաց սակաւ ինչ ծանօթութիւն տալու համար՝ աւելորդ չենք համարիր Լերօնի պատմական կենաց քանի մի գծերը պատկերացնել:

Լեսար Լերօն, Լեսարեան ցեղի հինգերորդը, իւր Լգրիպինա մօր չւնորհիւ 54 թուականին Հռովմէական պետութեան դուխր կ'անցնի իրեւ կոյս, և հետ գհետէ տոյ չարիքները կը գործէ: — Իւր մայրը սպաննել կուտայ իր վաղը յանդիմանելուն համար. մինչ կատակները և հոպիտ գուաններ իւր շուրջ կը ժողովէ և խաղակից կը լինի նոցա, իր կառքին մարդիկ լծելով կը շրջի կրկեսներու մէջ, կը պարէ և կը խաղայ Թատրօնի մէջ բաղմաթիւ բզբ քօտաօրաց առջև, իւր անձը կը ժառնէ հրապարակական ամենառեւտաի խալաւաւակութեանց. իւր կին (Գլաուա) ան կ'արձակէ և ապա կը նպաննէ, իւր երկրորդ կինը՝ Պապեան աստուիոն կը քաջախիտէ և Հռովմէացիք կը հրկիզէ:

է. նոյն միջոցին մի աշտարակի վրայ բարձրանալով՝ կրակի երգել Տրոիւ գոյի հրկիզութեան վրայ յօրինած իւր քերթուածը: Երբ ինքը կը գատապարտուի որպէս պատճառ հրկիզութեան Հռովմաքաղաքի՝ յանցանքը Քրիստոս նեղց վրայ կը ձգէ և ամենագոտն տանջանքներով շատերը կը կտորէ: Ապանել կրայ նոյնպէս զանազան նըշանաւոր անձինք՝ Օերակուտէն, ի շարս որոց էր և իւր գատապարակ Անեկա իմաստասէրը: Իրր երաժշտ կը ծոնապարհորդէ ի Յունաստան և այլ տեղեր, և 1800 պապներ կընդունի: Իսկ ի վերջոյ երբ թշնամիք իւր տէրութեան վրայ կը յարձակին և կը տեսնեն թէ ձերբակալ պիտի լինի, իւր մը տերիմքարտուղարի ձեռքով ինքնասպան կը լինի և տակաւին վերջին շունչը շարձակած՝ կ'աղաղակէ. «Ահ ի՜նչ մեծ արուեստագէտ կորաւ աշխարհի համար»:

Երօնի այս բարբարոսական եւ խայտառակ արարքները յայտնի էին ոչ միայն նոյն դարու հեթանոսներուն, այլ և Քրիստոնէից և նոյն իսկ Յայտնութիւնը գրող Յովհաննէս Լեւոնաբանչին, որ ժամանակակից էր: Աւստի զարմանալի չէ որ Յայտնութեան 666 թիւէն Վիտար Երօնի անունը ելած է: Իսկայ թէ ինչու թիւեր նշանակուած են Յայտնութեան մէջ, այստեղ Լեբայտիան սովորութիւն պիտի նշմարենք և ոչ այլ ինչ, Լյա սովորութեան նշմարանքը կը տեսնենք նոյն իսկ Յայտնութեան մէջ Գլ. Թ. հաւմար 11. ուր Լեբայտիքէն Լեբայտի և Յունարէն Լեբայտի բառը, մեր երանելի Կաթողիկոս ըստ իմաստին՝ Լեբայտի թարգմանած են. «Իւսունին թագաւոր ի վերայ իւրեանց զհրեշտակն գծախոյ Լեբայտն, որ կոչի ի հայ բարբառ Լեբայտ»:

պիտի զարմանանք այս մասին, որովհետեւ այնչափ հասարակեալ էր այս ուր սովորութիւնը բարբառներուն մէջ, որ տեսնելով թէ ոմանք կը գալթակիլն այն խոսքին վրայ (Թող ժիւ 1) որ Սովսէս մարգարէն Լեբայտի կին աւած է. իրենց քանի մի օրինակաց մէջ վոնեցին բանին իմաստը այսպէս. Հաշուեցին Լեբայտի և Լեբայտեցւոյն Քաղի, բառի թիւերը և հաշուար գտնելով 736 ին, այն թիւով տեղը ուրիշ բառ դրին, այսինքն Սեբայտի, որ կը նշանակէ գեղեցկութիւն Լեբայտն որ յետ ժամանակաց սովորութիւն եղաւ Լեբայտեցւոյ մէջ վաւ խանակ ասելով թէ Սովսէս Քաղի (Եթովպացի աղջիկ) առաւ, սկսան ասել թէ՝ Սովսէս գեղեցկութիւն կին առաւ, որովհետեւ այս երկու բառերու թիւը ըստ եբրայտական նոյն էր. այսինքն 736: Լյա սովորութեանը հետեւութիւն կը կարծեն եւս ըստացի բանագէտք Յայտնութեան 666 թիւոյն կիրառութիւնը, ըստ ուրով Յովհաննէս աւետարանիչը, այն աստուածային շնորհք լցուած առաքելաւ, տեղեակ էր արդէն եբրայտցի բարբառեաց գիտութեանը և սովորութեանը:

Ասկայն մենք, որչափ որ մի կողմէն կըզգանք որ շատերը հաճութեամբ պիտի կարդան այս բանագրական մեկնութիւնը Յովհաննէս Յայտնութեան 666 թիւոյն, միւս կողմէն եւս ինքնին համոզուած ենք որ առաւել կենդանարար է գրուածքի հոգին մեկնել քան թէ բառերը և տառերը, Պողոս առաքելոյն գեղեցիկ խոսքը յիշելով թէ, «Գիրն ապանակէ, այ հոգին կեցուցանէ»:

Արքան կարեկցութեան արժանի են այն ուղղմելքը, որով Սուրբ Գրաց գիտութեան ոյրբէնն անգամ ուսած չը լինելով շատ անգամ կը յիշ

յեղեն այս հարցումները՝ « Լ'ամայ
կերած պտուղն քնշ էր : Սաղմոսի մէջ
քանի՞ անայր տուն կայ : (Յիսուս քա-
նի՞ անգամ լայաւ : Իսկով՝ օթեւանք
առածն քնշ է : (Յովհաննու (Յայտնու-
թեան 666 թիւն ով է : Լ'ստուած քա-
նի՞ անուն ունի, և այն և այն ո : Լ'ս-
տեասկ հետաքրքրութիւնները ամենե-
ւին արժէք չունին մեզ համար, վասն
զի՞ Սուրբ Պրոց հոգին է միայն որ կու-
րող է Վրիստոնէի հազւոյն կենդա-
նութիւնն տալ և որովն բաւականութե-
թիւն է և ոչ թէ Վենեդիկոսի կամ՝
Վերոնի անուամբ եղած բացարձակ
թիւները : Վասն զի՝ այս տեասկ բա-
ցարութեանց մէջ մտաւոր հետա-
զոտութիւնը յագուրդ չունի, և եթէ
666 թիւը այսօր Վերոնի անուանը
կուտայ, գուցէ վաղը կամ՝ միւս օրը
մի ուրիշ անուան վրայ պիտի թարգ-
մանէ : Իսկ Ս. Պրոց հոգին անփոփոխ
է և մշտնջենաւոր : Լ'անուան նոյն իսկ
(Յայտնութիւնը և նկատենք : Ի՞նչ վե-
մութիւնն քնշ անպատում միտթարու-
թիւն և քնշ փրկարար ճշմարտութիւն :
(Յայտնութիւնը մի կատարեալ միտ-
թարութիւն է տառապելոց համար
և մի աննկուն զօրութիւն քրիստոնէ-
ական ճշմարտութեան օխոյեաններու
համար : (Յայտնութեան մէջ կը տես-
նենք որ անկրտուութիւնը, որչափ որ
օտակալն և զօրաւոր լինի, երբեք չէ
կարող յաղթանակել երկրի վրայ և
միշտ դատապարտուած է երկրին մէջ :
(Յայտնութեան մէջ կը տեսնենք, որ
ճշմարիտ իրաւունքը մահ չունի, և
որչափ ջանան նենգութեամբ և վրո-
րենութեամբ ճնշել, նա յարութիւն
կ'առնու : (Յայտնութիւնը կը քաջալե-
րէ և կը համուզէ զմեզ, որ բանակալու-
թիւնը, նիւթական տիւր և նենգա-
ւոր դաւաճանութիւններ երբեք չեն
կարող արգելք դառնալ մարդուն այն

ճանապարհն ընթանալու, օւր լ'ստու-
ած կ'առաջնորդէ : Երկար դարերէն
ի վեր աշխարհիս մէջ կատարուած մե-
ծամեծ իրողութիւնները կատարելա-
պէս կը հաւաստեն ամեն բան, ինչ-
որ (Յայտնութեան մէջ վճռուած է
հազար ութ հարիւր տարիէն առաջ,
այն է, — Ղըմարտ-Սիւնը, լ'արար-Սիւնը
և իրաւունքը միշտ յաղթող են : Թո՛ղ բռնա-
ւորները և նենգաւորները իրենց յօգ-
նութիւնն կոչին դժոխոց բոլոր զօրու-
թիւնները և մերեկայքը, երբեք չեն կա-
րող բարոյական զօրութեան իրաւունք-
քը ստել և յաղթահարել : Եւ գուցէ
յիշատենայ, սակայն միշտ յաղթա-
կան է : Թէ և չարագործները երբեմն
կը ծափահարեն՝ ըստ երեւոյթին իբր-
յաղթող, բայց չարագործութեան
վերջը միշտ թշուառութիւն է : Թէ
և երբեմն յաղթական երգեր կը նուա-
գեն նենգաւորները, սակայն միշտ դե-
պի կործանումն կը գիմեն : Սէ (Ետար-
ները կարոցին և ոչ նիւթապաշտու-
թիւնը ու խաւարասիրութիւնը կա-
րեն նուաճել ճշմարտութեան աննկուն
զօրութիւնը : Լ'ստ է (Յայտնութեան
հոգին : Հեղահամբոյր Օհն ճշմար-
տութեան՝ Գառն երկնաւոր՝ ամեն
ընդգիմադիր զօրութեանց միշտ պի-
տի յաղթէ : « Ի՞նչ Գառնին պատերապ-
մին և Գառն յաղթէ նոցա ո : (Յայ-
գէ 14 : (Յայտնութեան այս հոգին
է ահա, որ աղբիւր է ոչ միայն բա-
րոյական զգացումներու արգասաւո-
րութեան, այլ և աղբիւր է մարդկա-
յին ճշմարիտ ազատութեան, որ սիրե-
լի գուտարն է Վրիստոնէութեան, իւ-
րեմն վերապին կը կրկնենք, որ Սուրբ
Պրոց առան և մեկնութեան քաղց-
րութիւնը ծաշակելու համար՝ ամենէն
առաջ հաքկաւոր է ներքին հազւոյն
ընտելանալ, որ անդարար է և փրկա-
րար :